և հաստատութիւն հաւատոյս մերոյ. զի քո բարեխաւսութեամբ առաքեցաւ մեզ համանըմանս քո յանապատէ՝ բերել երաբիոն ճըգնութեան իւրոյ, որով լուսաւորեցան որդիք Նոր Սիոնի, ներբողելով զառաքոյն ձեր ի փառըս և ի գովեստ անուան իւրոյ։

Եւ հանկուցեալ և հիւրընկալեալ՝ որպէս էնն առ հայրն * ընտրեալ հնչմանն։ Եւ ի վաղիւն յուղի անկեալ ընթանային հետիոտս, և անցանէր յայնկոյս Եփրատ գետոյ, և հանդիպեալ թագաւորին Վռամշապհոյ. զի գայր ի Միջագետաց, [1] և տեղեկացեալ էր զիրացն եղելոց։ Որ և ի տեսանել զսուրբսն, ի բացուստ ինչանէր յերիւարէն և գայր հետիոտս ընդ առաջ նոցա, և ի ծունր ինչեալ երկրպագէր հայրապետին, և վարդապետին. և հոլանեալ հայցէր և առնոյր աւրհնութիւն և համբոյր։ Եւ զբաւարձացեալ ցնձայր հոգով, և խայտայր մարմնով. զնոյն առնելով և զաւրաց նորա։ Եւ միաւորեալ դային խնդութեամբ՝ ի մտի երեալ տեսանել զմեծ անապատն որ էր սեփհական թագաւորացն Արշակունեաց, հինգ հընտ-

---

* Լուս. Աբրահամ։

1. Թէ այս եւ թէ հիշ առաջ Ինանակեան վանքի մասին տեղեկութիւններդ մանրամասնութիւններ են, որ չունին գլխաւոր աղբիւրները։